ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

3601, ք.Եղեգնաձոր, Զորավար Անդրանիկի 4 հեռ. (0.281) 2.55.02, ֆաքս (0.281) 2.55.02

«14» 07 2025թ. № 66/2025-25

Վայոց ձորի մարզի Վայք համայնքին
(ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Վայք բնակավայր, Շահումյան փողոց, 18 շենք)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել:»

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և **համայնքները** քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորության իրականացմանը՝ նշել է հետևյալը.

«(...) երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է

վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով **հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը**: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նույն որոշմամբ, անդրադառնալով որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դատախազության առաջարկի հիման վրա պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու ժամկետներին, նշել է.

«(...) մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս:

Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, **նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին:**

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է **ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով**:

Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել **դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով**:

Այսինքն՝ համայնքին պատճառված վնասի հատուցման պահանջի կապակցությամբ դատախազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, երբ վերջինս հայց ներկայացնելու առաջարկություն է ներկայացրել համայնքին, իսկ **համայնքը ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել**, այլ կերպ ասած՝ դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախատեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին»:

Պետության գույքային շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության Վայքի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Վայոց ձորի մարզի նախկին Սերս համայնքում 2010թ. հունիսի 25-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստում (Սերս համայնքի նախկին ղեկավարն է եղել Տիգրան Մուխայելի Մալխասյանը, ծնված՝ 05.10.1971թ.), որին մասնակցել են Արարատ քաղաքի բնակչուհի Թամարա Արամի Հովհաննիսյանը (ծնված՝ 19.11.1971թ.) և Երևան քաղաքի բնակիչ Արշակ Վանյայի Մկրտչյանը (ծնված՝ 07.05.1978թ.), հաղթել է Թամարա Հովհաննիսյանը և վերջինիս Սերս համայնքի վարչական տարածքում որպես արոտավայր՝ տարեկան 3000 ՀՀ դրամ վարձավճարով, վարձակալության է հանձնվել 0,2 հա հողատարածք: Թամարա Հովհաննիսյանը 2010թ. հուլիսի 30-ին իր կողմից տրված լիազորագրով լիազորել է մրցույթի մասնակից Արշակ Վանյայի Մկրտչյանին վարձակալած հողամասը տալ ենթավարձակալության, ինչի հիման վրա Արշակ Մկրտչյանը 2010թ. նոյեմբերի 8-ին նշված հողատարածքը 40.000 ՀՀ դրամ վարձավճարով ենթավարձակալության է հանձնել «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերությանը:

Ոստիկանության Վայքի բաժնում նախապատրաստված նյութերով տվյալներ են ձեռք բերվել, որ Տիգրան Մուխայելի Մալխասյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, զբաղեցնելով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավարի պաշտոնը, որպես մրցույթային հանձնաժողովի նախագահ, 06.07.2010թ. Սերսի համայնքապետարանում անցկացրել է ձևական մրցույթ, որի արդյունքում 10-040-0112-0032 ծածկագրով 0.2 հա հողատարածքը տարեկան 3000 դրամ արժեքով 30.06.2010թ. վարձակալության է հանձնել Թամարա Հովհաննիսյանին: Վարձակալության պայմանագրի էական պայմանի խախտմամբ՝ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու, վերջինիս կողմից 08.11.2010թ. հողամասը ենթավարձակալության է հանձնվել «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերությանը /թիվ 019VA հողամասի ենթավարձակալության պայմանագիր/, որի դիմաց որպես վարձավճար 2010թ. նոյեմբերի 8-ից մինչև 2012թ. ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածի համար սահմանվել է ամսական 40.000 ՀՀ դրամ, իսկ 2012թ. ապրիլի 17-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածի համար՝ ամսական 60.000 ՀՀ դրամ վարձավճար /հիմք՝ 17.04.2012թ. թիվ 019 VA/1 համաձայնագիր/: Նյութերի նախապատրաստմամբ պարզվել է, որ կնքված ենթավարձակալության պայմանագրով Թամարա Հովհաննիսյանը մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ն ստացել է շուրջ 3.120.000 ՀՀ դրամ, որից համայնքի բյուջե է վճարել ընդամենը 18.000 ՀՀ դրամ գումար: Վերոնշյալ գործարքների արդյունքում Թամարա Հովհաննիսյանն ստացել է խոշոր շահույթներ, իսկ Սերս համայնքը զրկվել է ֆինանսական այդ աղբյուրից օգտվելու հնարավորությունից:

Նախապատրաստված նյութերով 28.05.2021թ. ՀՀ ոստիկանության Վայքի բաժնում արարքի կատարման պահին գործող, 01.08.2003թ. ուժի մեջ մտած և 01.07.2022թ. ուժը կորցրած ՀՀ նախկին քրեական օրենսգրքի (այսուհետ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 308-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 21152421 քրեական գործը (վարույթը), կատարվել է հետաքննություն, ապա 07.06.2021թ. նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական

վարչություն, ընդունվել նախ քննիչ Դ.Դավթյանի, ապա՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Հարությունյանի վարույթ:

Նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցության հիման վրա 23.07.2021թ. որոշում է կայացվել Տիգրան Մուխայելի Մալխասյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հետևյալ արարքը կատարելու համար.

Տիգրան Մուխայելի Մալխասյանը 2006թ. նոյեմբերի 9-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավարի պաշտոնը և հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, այն է՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որն էական վնաս է պատճառել Վայոց ձորի մարզի Սերս համայնքի օրինական շահերին և համայնքի համար անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, մասնավորապես, Տիգրան Մալխասյանը՝ որպես Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավար, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 43-րդ, 48-րդ, 76-78-րդ, 80-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 47-49-րդ կետերով սահմանված կարգով օժտված լինելով համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու համար համայնքի ավագանուն առաջարկություններ ներկայացնելու, համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողովներ ստեղծելու, մրցույթներ կազմակերպելու, դրանք գլխավորելու լիազորություններով, իրավասու լինելով իր իրավասության շրջանակում ընդունելու որոշումներ, կազմելու արձանագրություններ, արձակելու կարգադրություններ և պատասխանատվություն կրելով իր գործառույթների պատշաճ կատարման համար, Սերսի համայնքապետարանում գլխավորել և անցկացրել է հողամասը վարձակալության ներկայացնելու և տրամադրելու ակնհայտ ձևական մրցույթներ, որոնց արդյունքում ընդունված մրցութային հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, իր կողմից ընդունված 25.05.2010թ. թիվ 4 և 26.06.2010թ. թիվ 5 որոշումների հիման վրա անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ 2010թ. հուլիսի 6-ին Վայոց ձորի մարզի Սերս համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության արոտավայր հանդիսացող, 10-040-0112-0032 կադաստրային ծածկագրով, 0,2 հա մակերեսով հողատարածքը տարեկան 3.000 ՀՀ դրամ վարձավճարով, 25 տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության է տրամադրել իրականում նման գործունեություն ծավալելու մտադրություն չունեցող և այն ալեհավաք-կայանի տեղադրման համար «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ կապի օպերատորին հետագայում ենթավարձակալության հանձնելու և իր ու իր ազգական Նունե Գրիշայի Գրիգորյանի համար շահույթ ստանալու շահադիտական

նպատակ հետապնդող Արարատ քաղաքի բնակչուհի Թամարա Արամի Հովհաննիսյանին: Այնուհետև, ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ սահմանված դեպքերում և կարգով ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու լիազորություն և հաստատապես իմանալով, որ Թամարա Հովհաննիսյանին վարձակալության տրամադրված վերոնշյալ համայնքապատկան հողամասը որոշակի վճարի դիմաց ենթավարձակալության է տրամադրվել «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ին /ներկայիս՝ «Յուքոմ» ՍՊԸ/ և օգտագործվել է ապօրինի՝ ոչ իր գործառնական նշանակությամբ, այն է՝ օգտագործվել է որպես կապի օբյեկտի հող՝ բջջային հիմնական կայանի տեղակայման նպատակով, առանց հողակտորի նպատակային նշանակությունը փոխելու ուղղությամբ որևէ միջոցներ ձեռնարկելու, ապօրինի հողօգտագործումը կանխարգելելու փոխարեն չի առարկել ապօրինի ենթավարձակալության պայմանագրի կնքման դեմ և տվել է գրավոր համաձայնություն հողամասը ենթավարձակալության հանձնելուն չառարկելու վերաբերյալ, որի պատճառով 2010թ. նոյեմբերի 8-ին վարձակալության պայմանագրի էական պայմանի խախտմամբ՝ առանց հողի նպատակային նշանակությունը փոփոխելու 10 տարի ժամկետով կնքվել է վերոնշյալ ենթավարձակալության պայմանագիրը, որից հետո ենթավարձակալ ընկերության կողմից տեղադրվել է կապի ենթակառուցվածքի օբյեկտ հանդիսացող ալեհավաք կայան: Կնքված ենթավարձակալության պայմանագրի և այդ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 17.04.2012թ. համաձայնագրի հիման վրա վարձակալ Թամարա Հովհաննիսյանը և վերջինիս ազգական Նունե Գրիգորյանը մինչև Սերս համայնքի ղեկավար Տիգրան Մալխասյանի պաշտոնավարման ավարտը՝ 2016թ. հոկտեմբերի 8-ը, կապի օպերատորից բանկային փոխանցման եղանակով շարունակաբար ստացել են 2010թ. նոյեմբերի 8-ից մինչև 2012թ. ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածի համար 660.000 ՀՀ դրամի չափով, իսկ 2012թ. ապրիլի 17-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 3.180.000 ՀՀ դրամի չափով վարձավճարների տեսքով շահույթ, որից Սերս համայնքի բյուջե վճարվել է ընդամենը 18.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հողի սկզբնական վարձակալության արժեք:

Տիգրան Մալխասյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու հետևանքով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի իրավունքներին և օրինական շահերին անզգուշությամբ պատճառվել է ծանր հետևանքներ, այն է՝ համայնքը զրկվել է իր սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման դիմաց 3.822.000 ՀՀ դրամի չափով եկամուտ ստանալու հնարավորությունից:

23.07.2021թ. կայացված որոշմամբ Տիգրան Մալխասյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

28.02.2022թ. որոշում է կայացվել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու Հովսեփ Վլադիմիրի Զաքարյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին:

22.05.2022թ. որոշում է կայացվել 3.822.000 ՀՀ դրամի չափով մեղադրյալ Տիգրան Մալխասյանի անվամբ գրանցված անշարժ գույքերի մասնաբաժինների վրա կալանք դնելու մասին:

Նկատի ունենալով, որ Տիգրան Մալխասյանին մեղսագրվող միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է ավելի քան 5 տարի ժամանակ /5 տարին լրացել է 2021թ. հոկտեմբեր ամսին/, նրա կատարած հանցանքի վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել, վերջինս ընդունել է իր կատարած արարքը, չի առարկել իրեն մեղսագրված հանցանքը կատարելու և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու ոչ արդարացնող հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, 22.05.2023թ. որոշում է կայացվել Տիգրան Մալխասյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով /համապատասխանում է գործող քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասին/ իրականացվող հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով:

Որոշմամբ վերացվել է մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը, իսկ Տիգրան Մալխասյանի գույքերի արգելադրումը պահպանվել է մինչև տվյալ վարույթով եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելը:

Քրեական վարույթը կարճվել է 26.09.2023թ. որոշմամբ, որը հսկող կողմից հաստատվել է 27.09.2023թ.:

Տիգրան Մալխասյանի նկատմամբ իրականացվող հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 22.05.2023թ. որոշումը և քրեական վարույթը կարճելու մասին որոշումը չեն բողոքարկվել, չեն վերացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ (...) 10) վնասներ հատուցելով. (...):

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված է հետևյալը.

«1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը: (...)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է հետևյալը.

«1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

2. Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ: (...)»:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի և 1058-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների շրջանակում վնաս պատճառելու հետևանքով պատասխանատվության ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին, արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

- պարտապանի ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- պատճառված վնասը,
-վնասների և ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային կապը,
-պարտապանի մեղքը (ի թիվս ՀՀ վճռաբեկ դատարանի այլ որոշումների՝ տե՛ս Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Իսկ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:»:

Քրեական վարույթով հաստատվել է, որ Տիգրան Մուխայելի Մալխասյանը 2006թ. նոյեմբերի 9-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում

զբաղեցնելով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավարի պաշտոնը և հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, այն է՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որն էական վնաս է պատճառել Վայոց ձորի մարզի Սերս համայնքի օրինական շահերին և համայնքի համար անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, մասնավորապես, Տիգրան Մալխասյանը՝ որպես Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավար, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 43-րդ, 48-րդ, 76-78-րդ, 80-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 47-49-րդ կետերով սահմանված կարգով օժտված լինելով համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու համար համայնքի ավագանուն առաջարկություններ ներկայացնելու, համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողովներ ստեղծելու, մրցույթներ կազմակերպելու, դրանք գլխավորելու լիազորություններով, իրավասու լինելով իր իրավասության շրջանակում ընդունելու որոշումներ, կազմելու արձանագրություններ, արձակելու կարգադրություններ և պատասխանատվություն կրելով իր գործառույթների պատշաճ կատարման համար, Սերսի համայնքապետարանում գլխավորել և անցկացրել է հողամասը վարձակալության ներկայացնելու և տրամադրելու ակնհայտ ձևական մրցույթներ, որոնց արդյունքում ընդունված մրցութային հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, իր կողմից ընդունված 25.05.2010թ. թիվ 4 և 26.06.2010թ. թիվ 5 որոշումների հիման վրա անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ 2010թ. հուլիսի 6-ին Վայոց ձորի մարզի Սերս համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության արոտավայր հանդիսացող, 10-040-0112-0032 կադաստրային ծածկագրով, 0,2 հա մակերեսով հողատարածքը տարեկան 3.000 ՀՀ դրամ վարձավճարով, 25 տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության է տրամադրել իրականում նման գործունեություն ծավալելու մտադրություն չունեցող և այն ալեհավաք-կայանի տեղադրման համար «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ կապի օպերատորին հետագայում ենթավարձակալության հանձնելու և իր ու իր ազգական Նունե Գրիշայի Գրիգորյանի համար շահույթ ստանալու շահադիտական նպատակ հետապնդող Արարատ քաղաքի բնակչուհի Թամարա Արամի Հովհաննիսյանին: Այնուհետև, ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ սահմանված դեպքերում և կարգով ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու լիազորություն և հաստատապես իմանալով, որ Թամարա Հովհաննիսյանին վարձակալության տրամադրված վերոնշյալ համայնքապատկան հողամասը որոշակի վճարի դիմաց ենթավարձակալության է տրամադրվել «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ին /ներկայիս՝ «Յուքոմ» ՍՊԸ/ և օգտագործվել է

ապօրինի՝ ոչ իր գործառնական նշանակությամբ, այն է՝ օգտագործվել է որպես կապի օբյեկտի հող՝ բջջային հիմնական կայանի տեղակայման նպատակով, առանց հողակտորի նպատակային նշանակությունը փոխելու ուղղությամբ որևէ միջոցներ ձեռնարկելու, ապօրինի հողօգտագործումը կանխարգելելու փոխարեն չի առարկել ապօրինի ենթավարձակալության պայմանագրի կնքման դեմ և տվել է գրավոր համաձայնություն հողամասը ենթավարձակալության հանձնելուն չառարկելու վերաբերյալ, որի պատճառով 2010թ. նոյեմբերի 8-ին վարձակալության պայմանագրի էական պայմանի խախտմամբ՝ առանց հողի նպատակային նշանակությունը փոփոխելու 10 տարի ժամկետով կնքվել է վերոնշյալ ենթավարձակալության պայմանագիրը, որից հետո ենթավարձակալ ընկերության կողմից տեղադրվել է կապի ենթակառուցվածքի օբյեկտ հանդիսացող ալեհավաք կայան: Կնքված ենթավարձակալության պայմանագրի և այդ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 17.04.2012թ. համաձայնագրի հիման վրա վարձակալ Թամարա Հովհաննիսյանը և վերջինիս ազգական Նունե Գրիգորյանը մինչև Սերս համայնքի ղեկավար Տիգրան Մալխասյանի պաշտոնավարման ավարտը՝ 2016թ. հոկտեմբերի 8-ը, կապի օպերատորից բանկային փոխանցման եղանակով շարունակաբար ստացել են 2010թ. նոյեմբերի 8-ից մինչև 2012թ. ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածի համար 660.000 ՀՀ դրամի չափով, իսկ 2012թ. ապրիլի 17-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 3.180.000 ՀՀ դրամի չափով վարձավճարների տեսքով շահույթ, որից Սերս համայնքի բյուջե վճարվել է ընդամենը 18.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հողի սկզբնական վարձակալության արժեք:

Տիգրան Մալխասյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու հետևանքով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի իրավունքներին և օրինական շահերին անզգուշությամբ պատճառվել է ծանր հետևանքներ, այն է՝ համայնքը զրկվել է իր սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման դիմաց 3.822.000 ՀՀ դրամի չափով եկամուտ ստանալու հնարավորությունից:

Բացի վերոգրյալը, 14.04.2025թ. Վայոց ձորի մարզի դատախազի կողմից գրություն է հասցեագրվել «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ գլխավոր տնօրենին, տրամադրելու տեղեկատվություն, թե «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վերը նշված ենթավարձակալության պայմանագրերի ու համաձայնագրի շրջանակներում Թամարա Հովհաննիսյանին կամ նրա լիազորված անձ Արշակ Մկրտչյանին որքան գումար է փոխանցվել:

23.04.2025թ. ստացվել է ընկերության գլխավոր տնօրենի թիվ 697 գրությունն այն մասին, որ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Թամարա Հովհաննիսյանին վճարվել է 540.000 ՀՀ դրամ գումար, 2017, 2018, 2019, 2020 և 2021 թվականների համար Թամարա Հովհաննիսյանին վճարվել է ընդհանուր 3.600.000 ՀՀ դրամ գումար /յուրաքանչյուր տարվա համար 720.000 ՀՀ դրամ/, իսկ 2022 թվականի ընթացքում մինչև պայմանգրի լուծումն ընկած ժամանակահատվածը՝ 05.12.2022 թվականը՝ 660.000 ՀՀ դրամ գումար:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի հաշվառմամբ տվյալ դեպքում Տիգրան Մալխասյանի ոչ օրինաչափ՝ հակաիրավական՝ հանցավոր վարքագծի փաստը, վնաս պատճառող անձի առկայությունը, պատճառված վնասի առկայությունը և չափը, ինչպես նաև վնասների և ոչ օրինաչափ վարքագծի միջև

պատճառահետևանքային կապի առկայությունը հաստատվում են Տիգրան Մալխասյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2023թ. մայիսի 22-ի որոշմամբ՝ դրանում հետազոտված ապացույցներով, ինչպես նաև «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պատասխան գրությամբ: Մասնավորապես՝ նշվածներով հաստատվել են պատասխանող Տիգրան Մալխասյանի ոչ օրինաչափ՝ հանցավոր վարքագիծը, դրա արդյունքում պետությանը /համայնքին/ վնաս պատճառած լինելու հանգամանքը և դրա չափը, այսինքն՝ պատճառահետևանքային կապը, ինչպես նաև մեղքը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի ուժով առկա է որպես կանխավարկած, քանի դեռ վնաս պատճառողը չի ապացուցել դրա բացակայությունը:

Իսկ ինչ վերաբերում է վնաս պատճառող անձի մեղքին, ապա տվյալ դեպքում պատասխանողի կողմից պետությանը պատճառված վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող՝ անձի մեղքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Անդրադառնալով թիվ 21152421 քրեական գործով (քրեական վարույթով) ձեռք բերված ապացույցների՝ սույն քաղաքացիական գործի շրջանակներում կիրառելու հարցին՝ հարկ է փաստել, որ Վճռաբեկ դատարանն իր՝ 2010 թվականի ապրիլի 22-ի թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ *թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տան դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը:*

Մեկ այլ՝ 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ *բացատրությունը և ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ գնահատելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես՝ այն, որ ցուցմունքի պարագայում դրա ձեռքբերման ընթացակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է բովանդակում այդ ապացույցի արժանահավատությունն ապահովելու առումով:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Տիգրան Մալխասյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2023թ. մայիսի 22-ի որոշմամբ արտացոլված փաստական տվյալները՝ ապացույցները, սույն քաղաքացիական գործի քննության համար ունեն ինքնուրույն գրավոր ապացույցի նշանակություն:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2023թ. մայիսի 22-ի որոշումից պարզ է դառնում, որ մեղադրյալ Տիգրան Մալխասյանի նկատմամբ արարքի կատարման պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված հանրային քրեական հետապնդումը, որը համապատասխանում է *2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասին*, դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով, այն է՝ անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ տվյալ դեպքում առկա են համայնքին պատճառված 3.822.000 ՀՀ դրամի չափով իրական վնասի, և 2016 թվականի նոյեմբերից մինչև 05.12.2022թ. 4.380.000 ՀՀ դրամի բաց թողնված օգուտի ձևով վնասի համար պատասխանատվության բոլոր պայմանները:

Վերոգրյալ փաստերի և իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Տիգրան Մալխասյանի՝ վերը նկարագրված արարքի արդյունքում համայնքին պատճառվել է ընդհանուր 8.202.000 /3.822.000+ 4.380.000/ ՀՀ դրամի վնաս, այսինքն խախտվել են պետության (համայնքի) շահերը, ուստի՝ առաջարկում եմ համայանքին պատճառված վնասի հատուցման պահանջով **<u>սույն առաջարկությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում</u>** հայց հարուցել իրավասու դատարան և հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել Վայոց ձորի մարզի դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել Վայոց ձորի մարզի դատախազություն:

Կից ներկայացնում եմ հայց ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ 1 սկավառակով:

Միաժամանակ մարզի դատախազությունը պատրաստակամ է ներկայացված փաստաթղթերի անբավարար լինելու դեպքում տրամադրելու թիվ 21152421 քրեական վարույթի նյութերում առկա հայցի վերաբերյալ անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատճեններ:

Առդիր՝ 1 սկավառակ՝ վերաբերելի նյութերով (կառաքվի սուրհանդակային ծառայության միջոցով):

Հարգանքով՝
Մարզի դատախազ

Recoverable Signature

X

ԱՍՊՈՒՐԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Signed by: AVETISYAN ASPURAK 1509820485

Ա.Ավետիսյան

Հայոց Պետրոսյանցների Մշակութային
ասպարեզագործական Կ/ից Զորաբերծ
Լ. Կարապետյան